

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

=188=

ԳՐ. ԶԱՂԵԹՅԱՆ

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԸ

ՊԵՏՀՐԱՍ

1931


ՅԵՐԵՎԱՆ

18 DEC 2017

ԳՐ. ԶԱՂԵԹՑԱՆ

332 Դ

ՎԱՐԿԱՅԻՆ ՈԵՖՈՐՄԸ



ՊԵՏՐՈՎ 1931

ՅԵՐԵՎԱՆ

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

ՊԵՏՉՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. 1649
ԳՐԱՌԵԴ. 6422 (Բ)
ՊԱՏՎԵՐ 2773
ՏԻՐԱԺ 3000



1-328687

Այս համառոտ աշխատանքը հեղինակը կազմել է
Ֆիլմ՝ քանիկ աշխ. միության և Պետրանկի առաջար-
կով՝ վորոշ չափով բավարարելու այն մեծ հասարա-
կական հետաքրքրությունը, վորը առաջ է յեկել վեր-
շերս վարկային ռեֆորմի շուրջը։ Ի նկատի ունենալով
ընթերցողների միջին խավը և սահմանափակված լինե-
լով գրքի ծավալով, հեղինակը աշխատել է ուրվա-
գծել վարկային ռեֆորմի հիմնական խնդիրները,
ըստ հնարավորության խուսափելով նյութի նեղ մաս-
նագիտական շարադրությունից։

Այս աշխատանքը կատարելիս հեղինակը ի նկատի
յե ունեցել Պետրանկի հետեւյալ պաշտոսական հրա-
մարակությունները։

Положения и правила по кредитной реформе,
Москва 1931 г.

Положения о кредитной работе Госбанка,
Москва 1931 г. вып. I

Бюллетени Правления Госбанка за 1930 г.
Յերեվան 27 ապրիլ 1931 թ.

1. ՄԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ԱՆՑԱՇ ՈՒՂԻՆ

ՄԵՐ վարկային սիստեմի կազմակերպությունը
անբարեն կատված լինելով խորհրդային անտեսության դարձացման և նրա սոցիալիստական երեմենության աճման հետ, կրում է ժողովրդական, անտեսության ավագալ հասավի կնիքն ու ազգեցությունը. նրա շիալեկտիկան կազմում է բովանդակ ժողովրդական անտեսության դիալեկտիկայի անհնարինությունը:

Պրոլետարական հեղափոխությունն իր սկզբնական շրջանում անհրաժեշտություն պիտի խորառակեց կապիտալիստական հարաբերությունների զլամավոր ուղակները և առաջին հերթին վարկային սիստեմը, ինչպես այդ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո՝ բոլոր ժամանակոր բանկերի նացիոնալիզացիայի ակտով։ Այսուհետեւ քաղաքացիական կոլիների սպայմաններում, յերբ լեզաւ աղքանիքային շրջանառությունը քայլարդել եր և վարկի հիմք ծառայող ուրիշականները համարյա վերացել, բնակչութար լուծարքի պիտի յնթարկվեր նուև միակ վարկային հասաւությունը՝ Հանրապետական Ժողովրդական Բանկը, վորք վերակազմվել եր նախկին ցարական Պետրանելից։

Այսպիսով, սազմական կոմունիզմի շրջանում վարկային սիստեմի գոյության անհրաժեշտ սպայմանները միանդամային բացակայում ելին. այդ սպայմաններն

սոեղծվեցին քաղաքացիական կոխիները վերջանալուց
հետո, յերբ հնարավորություն յեղավ ձեռնամուխ ու-
նել քայլայված ժողովրդական տնտեսության վերա-
կանգնման գործին:

Գլատված և հյուծված արտադրողական ուժերի
վերականգնումը զյուղացիական ման և անջատ արհ-
տեսությունների պայմաններում կարող եր ունեղի ունե-
նալ միմիայն նոր տնտեսական քաղաքականության՝
ՆԵՊ-ի միջոցով, արդյունաբերության և գյուղացիա-
կան տնտեսությունների միջև ապրուչքային փոխհա-
րաբեռություններ հաստատելու ճռապարհով։ Ա. ո
խակ պատճառով տնտեսավարական հիմունքներով դո-
ծող արտադրական և առեվտրական միավորների ու-
տրեսաների գործունեյությունը ժամանակի պահանջ-
ների համեմատ ընթանում եր առեվտրական (ապրան-
քային) վարկի հիմունքներով։ Սոեկտրական վարկը
ըն կանարար առաջադրում եր մուրհակի և վարկային
հիմնարկների վերականգնման հարցը, և ահա 1921 թ.
աշնանը մուրհակը վերստին քաղաքացիական իրա-
վունք և ստանում և միաժամանակ հիմնվում և Պետա-
կան Բանկը, վորը կոչված եր կարդապորել դրամական
շրջանառությունը և կարճատեվ վարկերով Փինան-
սավորել արդյունաբերությունը, գյուղատնտեսու-
թյունը, առեվտուրը և այլ տնտեսական հյուզերը։
Այնուհետև հետզետե բացվում են Արդյունաբերական
Բանկը, Արագագին Առեվտրի Բանկը, Համկոռպանկը,
Ելեկտրուրանկը, Գյուղատնտեսական, Կոմունալ և այլ
այլակա կոչված «սպեցբանկերը», վորոնք զիսավորա-
վես հետապնդում են Փինանսական հատուկ նպատակ-
ներ—առանձին տնտեսական բնագավառների յերկարա-

տեղ, ինչպես և նրանց առանձնահատուկ կարիքների
կարծատեվ վարկավորումը։

ՆԵՊ-ի սկզբնական շրջանում մասնավոր առելորդի
աշխուժացումով առաջ և դալիս նաև մասնավոր չու-
կայի վարկային սիստեմ՝ փոխազարձ վարկի ընկե-
րությունները, վորոնք սակայն յերկար կանք չունե-
նալով անհետանում են բնական վախճանով—սոցիա-
լիստական զրոհի և մասնավոր շուկայի նահանջի հե-
տեւանքով։

ՆԵՊ-ի առաջին շրջանում արդյունաբերական մի-
ավորները գործում եյին վորոշ չափով ինքնուրույն և
անջատ, առանց ներքին պլանային ուժեղ կապի. դրան
համընթաց նաև Պետրանկն ու Հատուկ բանկերը զար-
գացնում եյին իրենց զործարքները միմյանցից ան-
կախ, առանց որդանական սերտ կապակցության։ Զը-
նայած այդ բանկերի սոցիալիստական ներքին բովան-
դակությանը, նրանք ընդորինակել եյին կապիտալիստա-
կան բանկերի գործառնության արտաքին ձևերը,
նրանց աշխատանքի արտաքին մեթոդները։ Այս առե-
րեկույթ հակասությունը առաջ եր դալիս տվյալ ժա-
մանակաշրջանում տիրող որյեկտիվ պայմաններից,
բայց նա առելի եր տալիս կարմիր զծից մյուս կողմը
«իմաստասիրությամբ» զբաղվողներին դուշակելու
պրոլետարական պետության մոտալուս նահանջը, նրա
հետագարձ ընթացքը գեղի կապիտալիստական կար-
գերը։ Սակայն այդ սին զուշակությունները կարձ ժա-
մանակից հետո զան հիսաթափությամբ պիտի վերջա-
նային, յերբ արտադրողական ուժերի վերականգնու-
մով հնարավորություն ստեղծվեց ուժեղացնել սոցիա-
լիստական ելեմենտները, հաղթահարել շուկայի տա-

98
բերային յերեվությները և վերակազմել տնտեսությունը պլանային սկզբունքով:

Ժողովրդական տնտեսության ռեկոնստրուկտիվ շրջանի փոթորկալից վերելքը, զյուղատնահասության սոցիալիստական վերակառուցումը և պահանջին ըստկրունքի խորացումը նոր պահանջներ ելին առաջարկում վարկային սխմեմին, պահանջներ, վորոնք նախատեսել եր լենինը իր ժամանակին և վորոնց կենսագործման այժմերությունը չեցել է Համակոմիտուսի վերջին համագումարը: Այս առթիվ 16-րդ համագումարում բնկ. Ստալինն իր ձառի մեջ արտահայտվել է այսպես: «Վարկային գործի սացիոնալ կազմակերպումը և դրամական ռեզերվների կանոնավոր տեղաշարժումները լուրջ նշանակություն ունեն ժաղովրդական արհետության զարգացման համար: Այս պրոբեմի լուծման համար կուսակցության ձեռնարկումներն ընթանում են յերկու ուղղությամբ՝ կարճատեղ վարկի ամրող գործը Պետրանկում կենտրոնացնելով դժով և համայնացած սեկտորի մեջ անկանոնիկ հաշվարկումներ կազմակերպելու դժով: Դրանով իսկ, նախ՝ Պետրանկը զառնում և արտադրության և ապրանքների բաշխման համապետական հաշվառման ապարատ, յերկրորդ՝ շրջանառությունից ազատվում են դրամական ահաղին մասսաները:

Վարկային սխմեմի ստրուկտուրայի և ներքին բռնակազմության մերակազմության անհրաժեշտությունը բոլոր և նեՊ-ի նոր և վերջին ետապի պահանջներից, յեր մեր տնտեսությանը թեվակոխելով սոցիալիզմի շրջանը՝ բացառում և վարկի նախկին սոցիալ-տնտեսական հարաբերությունները և նեղում նրա հր-

նացած շրջանակները: Դեռ անցյալ տարի նախաձեռնած վարկային ռեֆորմը հետզհետե կարում, հեռացնում է աեր վարկային սխմեմից այն ամենը, ինչ վոր նրան «կապիտալիստական այլանդակում ե» (Լենին): Վարկային ռեֆորմը կանխորոշեց այն ուղին, վորով այսուհետեղ պիտի ընթանա մեր վարկային սխմեմը՝ իբրեկմի ամբողջացած ապարատ, վորի մեջ պիտի արտազորի համայնացած տնտեսության գործունեցության դրամական արտահայտությունը և վորի միջոցով խստագույնությունը կանոնարկի յենթարկվի Փենանսական պլանների անշեղ կենսապործումը: Այդ ուղին միասնական բանկի ուղին և, վորը լենինը ընորոշել է հետեվյալ խոսքերով: «Խորագույններից խոչըրագույնը՝ միասնական Պետական Բանկը իր բաժանմուքներով յուրաքանչյուր զարգացնայում, յուրաքանչյուր գործարանին կից, ողա արդեն սոցիալիստական ապարատի իննը տասներորդ մասն և կազմում»: Այս նպատակով հետզհետե լուծարքի յենթարկվեցին Սրբունարկերական Բանկի, Արտաքին Առևվարի Բանկի, Համկոսութանկի բաժանմունքները, վորոնց գործառնությունները տեղերում անցան Պետրանկին: Այս տարվա հունվարի 1-ից գաղաքեց նաև կոռպերտախիլ—Կոլոնտարանկի (նախկին Գյուղարանները), գործունեցությունը նրա բոլոր գործառնությունները, ակտիվն ու պասիվն անցան Պետրանկին: Միաժամանակ Կոլոնտարանկի ստորին ցանցը՝ Գյուղատնտեսական մերակալին լոկերությունները վերակազմության յենթարկվելով վերած վեցին Պետրանկի ուսուական բաժանմունքների: Այսուհայով ամբողջացավ Պետրանկի ուսուական ցանցը, ոնդ վորում բոլոր խոր քաղաքներում և ուսուական կենտրոններում բա-

ցելով իր ճյուղերը, Պետրանկը Խորհրդային Միության լայնածավալ տերրիտորիան ծածկեց մի խիտ և ուժեղ վարկային ցանցով, փորն իր մեծությամբ յերկրագնդի վրա գրավում և առաջին տեղը: Սրանով, իհարկե, չի սպասվում մեր վարկային ցանցի ընդլայնումը, քանի վոր բացի ռայոնական բաժանմունքներից՝ Պետրանկը պիտի ունենա իր ճյուղերը և հաշվարկման դրամարկը ները խոչոր գործարաններին կից և մթերումների վայրերում. նա իր ստորին ցանցի միջոցով Փինանսական սպասարկումը՝ պիտի մոտեցնի առանձին արտադրական միավորներին:

Պետրանկը, տարածելով իր բաժանմունքների ցանցը ամենահեռավոր վայրերում, Հնարավորություն և ստանում՝ վարկավորման և դրամական շրջանառության գործը կենտրոնացնել մի միասնական ապարատի մեջ, փորն ըստ ամենայնի դրված պիտի լինի ռացիոնալ հիմքերի վրա՝ հաջաղությամբ իրականացնելու այն գժվարին և բարդ խնդիրները, վորոնք բղիում են յերկրի ինդուստրացման և ժողովրդական տնտեսության վերակառուցման պահանջներից: Միասնական կազմակերպված վարկային ապարատը ի վեճակի կլինի ընդդրիկելու և պրանային սիստեմի մեջ մտցնելու ամենահեռու ու ամենափոքր արտադրական և ապրանքաբաշխիչ միավորները: Նա Հնարավորություն կունենա Հսկելու և աշակելու ռայոններում գործող սպասարկումների, գործարանների, գյուղատնտեսական կազմակերպությունների և այլ տնտեսական միավորների ողանակին գործին և այդ գործը շաղկապելու միասնական պլանային սիստեմի հետ:

Պետրանկն իր տեղական բաժանմունքներում կենտ-

րոնացնելով վոչ միայն վարկավորման գործը, այլ և պետական ու տեղական բյուջեյի բոլոր գործառնությունները, փաստորեն դառնում և այն ապարատը, վորի մեջ կենտրոնանում և յուրաքանչյուր ուայոնի մուտքը և յելքը: Սրանով խակ ամրանում և առողջանում և ուայոնների Փինանսական բազան և կանոնավորվում գյուղի ու քաղաքի միջեվ տեղի ունեցող գլուխական շրջանառությունը: Միաժամանակ Պետրանկը Հնարավորություն և ստանում ուժեղացնելու տեղական ուսոււրանների մորթիվացիան, կարգավորելու դրամի նոլատակահարմար ու պլանաչափ վերաբաշխումը և վերջ դնելու Փինանսական կարգապահության խախտումներին: Այս բոլորին համընթաց զարկ և ստանում անկանիիկ հաշվարկումների սիստեմը համայնացած սեկտորում և կանոնավորվում դրամակատն մասսաների անարգել վերադարձը ծավալվող արդյունաբերության և շինարարության կարիքների համար:

Ահա մեր վարկային սիստեմի անցած ուղին և մոտակա անելիքները, վորոնք բղիում են ներկա արտադրական պլանցեսների և մատերիալ արժեքների շրջանառության ինդիքներից:

2. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԸ

Վարկավորման հին յեղանակը, վորը մեզ ժառանգություն եր մնացել կապիտալիստական բանկերից, վերջին տարիների ընթացքում մեր տնտեսության մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունների հետեւ վանքով տրանսֆորմացիայի պիտի յենթարկվեր և ընդուներ այդ փոփոխություններին համարկատասխան

Հեմբը և բովանդակություն։ Պլանային սկզբունքի խորացումը, գյուղանուհասության սոցիալիստական վերակառուցումը, արդյունաբերության կառավարման վերակարգությունը և մի շարք այլ սոցիալ-տնտեսական ձևոնարկումներ, վորոնք կապված են սոցիալիստական երեմնուների բացարձակ վերակառության հետ, — մը զում Ելին մեր վարկային սիստեմը գեղի նոր փնտում ների ուղին, հարկադրում նրան հրաժարվել կապիտալիստական բանկերի տրագիցիաներից։

Այս տեսակետից միութենական կէնտոնծրկոմի և Ժողկոմխորհի 1930 թվի հունվարի 30-ին «Վարկային ուժիքմի մասին» ընդունած դեկրետը նոր հորիզոններ և բացում մեր վարկային սիստեմի առաջ։ Դեկրետի համաձայն մեր վարկային սիստեմը հիմնովին փոխելով իր աշխատանքների մէթոդները և գործարքների յեղանակը, մտնում ե իր զարգացման մի նոր չքջանի, սոցիալիստական տնտեսության նոր պահանջների հունի մէջ։ Համայնացած սեկտորի մէջ անհետ վերանում և մուրչակը և նրանից ըսկառ կապիտալիստական իրավական հիմունքների մնացորդները։ Տնտեսական վերելքի հետ սերտորեն կապված Փինանսական առաջնակարգ խնդիրներից մեկը՝ տնտեսական պրոցենների և փոխհարաբերությունների կարգավորման հարցը շաղկապվում և կենտրոնացած հաշվառման և պրանշատի վարկավորման հետ։

Կենտործկոմի և Ժողկոմխորհի դեկրետի համաձայն, համայնացած սեկտորի մէջ մինչ այդ գոյություն ունեցող՝ ապրանքների ապառիկ վաճառման ձեր, վորք բարգացնում եր վարկավորման զործը և դժվարացնում նրա պլանավորումը, — իսպառ վերացվում և փոխա-

րինվում բացառապես բանկային ուղղակի վարկավորմամբ, ընդ վորում վարկավորումն այնպիսի ընթացք և տառնում, վոր վարկակարուու հիմնարկը կարողանու վարկն ստանալ անմիջապես բանկից, առանց ձիջուրդ ողակների։ Սա նշանակում է, վոր առևտրական կամ ապրանքային վարկը, այսինքն այն վարկը, վարդն ստանում և գնորդը վաճառողից, ընդմիշտ վերանում է և, մեծաքանակ ապրանքների վաճառքը կատարվում և վոչ թե մուրհակներով, այլ սոսկ բանկային հաշվարկումների ձեռվ, ընդ վորում վարկը բացվում և գնորդ հիմնարկն և վերջինիս հաշվին բանկը վճարում և ապրանքների փոխարժեքը այլ գումարով (մատակարա-
կական հաշվի հաշվի գումարով) հաշվի գումարով, ապրանքների և բենադրերի գրավը, ոնկու հաշվիները, դրամական ավանդները, ընթացիկ հաշվիները և այլն) փոխարինվում են այդ կոնտոկորրենտով, վորը և կազմում և տնտեսական որգանի հաշվարկի և վարկավորման միասնական հաշվիր։ Միևնույն հիմնարկին վարու զեպքերում թուրատրում և ունենալ զուգընթաց կոնտոկորրենտ հաշվիներ, մասնավորապես՝ կապիտալ ներդրումների համար, վորոնք թե ըստ միջոցների աղբյուրի և թե ըստ նրանց զործադրության՝ յեղանակի բնքնահատուկ

հաշվի
773

Այս նպատակով յուրաքանչյուր տնտեսական որգան բանկում պիտի ունենա իր կոնտոկորրենտ հաշվը, վորի մէջ պիտի արտացոլեն ավշալ որգանի բոլոր զրամական զործառնությունները—հումույթի գնումը, արտադրական, փոխադրական և այլ ծախքերը, աշխատավարձը, տուրքերն ու մասնահանումները, ապրանքների փաճառքը և այլն։ Բանկային նախկին բազմատեսակ հաշվիները (մուրհակների գեղչը, ապրանքների և բենադրերի գրավը, ոնկու հաշվիները, դրամական ավանդները, ընթացիկ հաշվիները և այլն) փոխարինվում են այդ կոնտոկորրենտով, վորը և կազմում և տնտեսական որգանի հաշվարկի և վարկավորման միասնական հաշվիր։ Միևնույն հիմնարկին վարու զեպքերում թուրատրում և ունենալ զուգընթաց կոնտոկորրենտ հաշվիներ, մասնավորապես՝ կապիտալ ներդրումների համար, վորոնք թե ըստ միջոցների աղբյուրի և թե ըստ նրանց զործադրության՝ յեղանակի բնքնահատուկ

բնույթ կրելով, Եյապես տարբերվում են Հիմնարկի ընթացիկ գործառնություններից. Հատուկ կոնտոկորուենտներով պիտի անցնեն նաև հացի և մաի մթերումները, ինչպես և արտաքին տուերի գործարքները, վորոնք բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում թե բանկի և թե հիմնարկի համար:

Վարկային ոեփորմի համաձայն տնտեսական որդանների գործարքների հաշվարկումն ընդունում է հետեւյալ ընթացքը. արտադրող կամ մատակարարող հիմնարկը վաճառելով ապրանքները մի այլ զնորդ հիմնարկի, հաշիվը ներկայացնում է բանկին, վորը ապրանքների արժեքը գրում է վաճառողի կոնտոկորրենտին իբրև պահանջ (այլ խոսքով՝ վճարում է վաճառողին) և միաժամանակ գրում է զնորդի հաշվին իբրև պարտք. վերջնա նույն ապրանքը վաճառելով սպառողական կոռպերատիվին, հաշիվը հանձնում է բանկին, վորը նույն յեղանակով ապրանքի արժեքը սպառկոռպի կոնտոկորրենտից փոխանցում է վաճառողի հաշվին, այսինքն՝ պակասեցնում է կամ հանցցնում վաճառողի բանկին ունեցած պարտքը և գրանցում է սպառկոռպին իբրև պարտք. սպառկոռպն իր հերթին վաճառելով ապրանքն անմիջական սպառողին, գանձված կանխիկ դրամը մուծում է բանկի դրամարկղը ի մարումըն իր պարտքի: Ահա սիեմատիկ այն ըրջանառությունը, վոր կատարում են մատերիալ արժեքները արտադրողից մինչև սպառողը, կամ դրամի այն ըրջանառությունը, վորը անցնելով վորոշ մետամորֆոզներ՝ կրկն վերացանում է գեպի իր սկզբնական յելակետը՝ բանկը: Այս ըրջանառության ընթացքում վարկը կատվում է ապրանքի հիմնարկի ուղեկցում, հետեւում է ապրան-

թին: Ինքնըստինքյան պարզ է, վոր վարկը դրամական արտահայտություն ունի, բայց այս ըրջանառության մեջ նա իբրև կանխիկ դրամ հանդես է դալիս գլխավորապես աշխատավարձ վճարելու և անհատ գյուղացիության մեջ կոնտրակտացիս ու մթերումներ կատարելու դեպքերում և մյուս կողմից՝ ապրանքներն անմիջական սպառողին վաճառելու ժամանակ, այսինքն՝ յերբ ըրջանառության ցիկլը ավարտվում է. իսկ համայնացած սեկտորի մեջ իր կատարած ըրջանառության ընթացքում սովորաբար նա հանդես չի դալիս իբրև կանխիկ դրամ, քանի վոր արժեքների փոխանցումները կատարվում են կոնտոկորրենտ հաշվիների միջոցով՝ անկանոնիկ (անդրամ) հաշվարկումների կարգով:

Վարկային ոեփորմի իմաստը կայանում է վոչ թե սոսկ ավտոմատիկ հաշվարկումների մեջ, այլ գերազանցութեն՝ տնտեսական պրոցեսների սլամաչափի կարգությունի մեջ. վարկը կապվում է մատերիալ արժեքների արտադրության և ըրջանառության խնդիրների հետ, նա հիմնվում է արդիքինալյանների վորակական և քանակական ցուցանիշների վրա: Այդ նպատակով պլանային որդառները և շահագրգութած վերադաս մարմինները քննելով և տարրալուծելով տնտեսական հիմնարկների պլանային տվյալները, սահմանում են վարկի չափը, նրա լիմիտը, վորոշ տվյալ հիմնարկը կարող է ոգտվել յեռամայակի ընթացքում: Յեթե այս ժամանակաշրջանում սահմանված վարկը չի բավարարում վարկադրույղ հիմնարկի կարիքները և կամ թե նրա պարտքը դերավանցում է վորոշած լիմիտից, Պետրանկը կիրառելով Փինանսական ներգործության վորոշ միջոցներ, մերժամանակ դիմում և վերադաս մարմինների ուշա-

գրությանն ու աջակցությանը՝ պարզելու - վարկային գիտցիպիհնայի խախտման պատճառները։ Յեթե ֆին-պլանը կազմված և սուույգ ավալների հիման վրա և յե-թե հիմնարկը գործում է իր պլանային առաջադրանքնե-րի սահմաններում, խախտման գեղքեր տեղի ունենալ չեն կարող. հետեւապես խախտման պատճառները պետք և փնտուել արտադրության նվազման, ինքնարժեքի բարձրացման, ներքին ռեսուրսների թերի ոգտագործ-ման և նման դրդապատճառների մեջ։ Նույնը վերաբե-րում է պետառեւրին և սպառկոռապերացիային-վար-կային գիտցիպիհնայի խախտումը և նման բացերը ըստ մեծի մասին բացատրվում են վերապեր ծախքերի հավել-լումով, ապրանքային մնացորդների կուտակմամբ, ան-դամավճարների գանձման թերակատարումով, անրո-տույգ ու անբավարար պլանավորմամբ։

Պլանային սկզբունքը գառնում է վարկավորման հիմնաքարը։ Պետքանկն իր փոխհարարերություններն արդյունաբերության, կոռուպերացիայի, տրանսպորտի և տնտեսական մյուս ճյուղերի հետ պիտի կառուցի բա-ցառապես պլանային հիմքերի վրա՝ զեկավարվելով ա-ռողջ հաշվետեսության և պլանաստուզման սկզբունք-ներով։ Բանկը և վարկավարվող հիմնարկները կապվում են միմյանց հետ պլանային բնդհանուր սիստեմով, տնտեսական ծրագրերի առողջա գործնական կոնտրո-լով։ Այլ փոխհարարերություններն անդրադառնում են բանկի վարկային ծրագրի և վարկավորվող հիմնարկի կոնտրոլութեան հաշվի վրա, վորք նախկին յերերուն և տարերային հաշվիներից դառնում է պլանային հաշվ։

Վարկային ռեֆորմն ազատելով տնտեսավարներին և մուրհակների հոգսերից, նրանց հնարավորությունն

առլիս իրենց ուշադրությունը կենտրոնացնել արտա-գրության և ըրջանառության խնդիրների ուսցիոնալի-գացիայի վրա, պլանավորման գործի, խնայողության ու կուտակման հարցերի շուրջը։ Մակայն, ուս զեռ չի նշանակում, թե վարկային ռեֆորմն ազատում է տրե-տեսավարներին իրենց սահմանած պարագայություն-ները ճշտությամբ կատարելու պատասխանավությունից։ Մինզես առաջ, մուրհակների բողոքարկման վր-առանցիւակ անտեսավարն ստիպված էր գիմել թույ-րատրելի և անթույլատրելի զանազան միջոցների և մին-չեվ իսկ ի զերե հանել հիմնարկի տնտեսական պլաննե-րը, միայն թե վրկադրի իր մուրհակը վորոշված ժամ-կետին, —այժմ անտեսավարն ազատվում է կապիտա-լիստական տնտեսության այդ գամոկլյան սրից՝ մուր-հակից, բայց միաժամանակ նա զրվում է սոցիալիստա-կան պլանային անտեսության պահանջների չեշտակի հարվածների տակ։ Այս պատասխանավությունն ավե-լի մեծ է և ավելի անողոք, քան մուրհակների բողոքար-կումը։ բայց այս պատասխանավությունը կապված է իներով պլանային առաջադրությունների կատարման հետ՝ միանդամայն հնարավոր և և իրավործելի, յիթե արտադրությունը չի նվազում, ինքնարժեքը չի ավելա-նում, ներքին միջոցներն առագործվում են լիովին, կուտակման պրոցեսն ընթանում է անչեղ ու անդա-դար, —այլ խոսքով, յեթե առողջ անտեսավարական սկզբունքը մնում է իր հերթիշխող գիրքի մեջ։

Վարկային ռեֆորմը վերջ գրեց տնտեսական հիմ-նարկների՝ տարբերակ հավաքած ու խճճված փոխա-կար հաշվիներին և պլանանջներին։ Արգելելով ավանու-ների ու կանխարգարական վարչությունի ապրանձերի ա-

պատիկ վաճառքը, նա վերացրեց պարտապահների՝ դերետորների հաջիվները. այսպիսով, չնորհիլ ուղղակի վարկավորման յեղանակին և անհապաղ հատուցման սկզբունքին, նա մի կատարյալ պարզություն մտցրեց Հիմնարկների փոխհարաբերությունների մեջ:

Վարկային ուժորմի առաջին իսկ որերում պարզվեց վարկերի գասավորման և բաշխման ձիւտ պատկերը ըստ ժողովրդական տնտեսության հատվածների: Մինչդեռ մուրհակային վարկավորման ըլֆանում կարծատի վարկերի ծանրության կենտրոնն ընկնում եր մրգունացերական հատվածի վրա, այժմ կը նույն նժարը հակվում է դեպի սպառկոռպերացիան և պետառեառություն, մի հանդամանք, վրբն իրոք համապատասխանում է իրերի գրությանը և տալիս և առանձին հատվածների պարզությունը պատկերը: Արդյունարերական հիմնարկներն իրենց առաջնաբերի՝ վաճառքից ստացած մուրհակները դեղէլով բանկերում, վասառըն նոր վարկ չելին ստանում, այլ սոսկ իրենց արտադրանքի փոխարժեքը. յանկետային ապրանքավաճառքի (առեւտրական վարկի) չնորհիլ այդ վարկն իրավես ստանում եր զնորդը, մինչդեռ այդ մուրհակների ահութիւնությանը թէ բանկերի հաշվետվության և թէ պաշտօնական ստատիստիկայի մեջ անցնում էր արդյունարերության վարկավորման անվան տակ: Վարկային ուժորմը լուծեց այս պարագորամալ հարցը, որը խիմիայի կանոնադաշտ վարկերի վրա դրացավ վոտքերի վրա:

Ինչու՞ն առանքը, վարկային ուժորմը հիմնարկանում հետապնդում էր հետեւյալ կարեռը ժողովրդատընտեսական նորատակները.

ա) ուժեղացնել պլանային սկզբունքը համայնացած

տնտեսության բոլոր բնակավառներում, ինչպես և իրեն՝ վարկային սիստեմի մեջ, վերածելով Պետքանկը արտադրության և ապրանքաբաշխության հաշվառումի մի ապարատի:

բ) վարկավորումը կապելով տնտեսական որդաներին առաջադրյալ ժողովրդատնտեսական խնդիրների հետ, ապահովել պլանային ցուցանիշների անթերի կենացդործումը.

գ) հիմնվելով տնտեսավարական սկզբունքի վրա, ամսի հջական ֆինանսական ներդրման խորացնելու պլանային և վարկային կարգավաճությունը.

դ) տնտեսական որդաների ապրանքագործական գործարքների հաշվարիւ կենտրոնացնելով Պետքանեկում ուժեղացնել անկանոնիկ հաշվարկումների սիստեմը, ուժեղացնել առաջնաբերի վարչությունը մտցնել հիմնարկների մեջ և առորյա փառական վերահսկողության յենթարկել տնտեսական որդաների պլանաշափ գործունեյությունը.

ե) տնտեսական և ֆինանսական որդաների կանխիկ դրամի ամրագության վենաբույրը կենտրոնացնել միասնական դրամանկում, իբրև մի անհրաժեշտ նախադրյալ դրամական միջոցների մորիկացիայի և վերաբաշխման համար:

Վերև թված նպատակները ցույց են տալիս, վորագործական բանկը թեակոխելով իր գարզացման այն ըրջանը, յերբ նա ողտագործելով ՆԵՊ-ի սկզբնական հատապում տիրող ապրանքագործական հարաբերությունները, որությունը ունեցած տարբեր տնտեսական սիստեմների համակեցությունը և այն բոլոր պարզմաները, վորոնք ծնունդ են ավել նրան իբրև «բանկի»:

այժմ նա դատնում է սոցիալիստական տնտեսության հաշվառման և գործառնական կոնտրոլի մի կազմակերպություն։ Գանվելով յերկու հակագեխը սիստեմների բաղիման կենտրոնում և վորոշ չափով ուժինեկացնելով այդ սիստեմների փոխհարաբերությունը, մեր վարկային սիստեմը միշտ ձգտել է յենթարկել հետամնաց սեկտորները հաճախացած սեկտորի ազգեցությանը, ոգտագործել ժողովրդական անտեսության բոլոր հնարավորություններն ու պոտենցիալ ուժերը հոգուտ սոցիալիստական շինարարության։

Սրանով ել մեր բանկը հիմնովին տարրերվում և կապիտալիստական բանկից, մինչդեռ վերջինս ձգտում է խորացնել ապրանքա-դրամական հարաբերությունները, զարգացնել կապիտալիստական արտադրության յեղանակը, կազմակերպել և կենսադրութել փոխկապիտալների շարժումը, իրեն մի ինքնածող արժեքի՝ խորհրդային բանկը ոգտագործելով ապրանքա-դրամական հարաբերությունները և փոխկապիտալների մնացորդները, աշխատել և խորտակել այդ հարաբերությունները, այգալիսի կապիտալների գոյությունը և այն բոլոր աղբյուրները, վորոնք մնում են կապիտա-լիստական տնտեսությունը. նա ձգտել է վոչչացնել այն հիմունքները, վորոնք պայմանավորում են կապի-տալիստական բանկի գոյությանը։

Մանելով սոցիալիզմի ներկա շրջանը, յերբ ՆԵՊ-ը գեռ չի սպառվել, մեր վարկային սիստեմը մի խոչը բեկումն և մտցնում իր աշխատանքի բովանդակության և մեթոդների մեջ, վորոնքի մի կողմից լիովին սպա-սարկի սոցիալիստական տնտեսության պահանջները և մյուս կողմից՝ նրա ազդեցության սփերայի մեջ դնի-

մասնակիր սեկտորի աղբանքա-դրամական հարաբե-րությունների վերջին մնացորդները։ Այս տեսակետից նրա զերն ավելի լայնանում և ավելի խորանում է, քան մինչ այժմ նա ուներ, իբր սոսկ բանկ։ Պլանային սիս-տեմի խորացումը և պլանային մեթոդների կիրառումը տնտեսության բոլոր հատվածներում, վարկավորման շաղկապումը առաջազդող տնտեսական խնդիրների և պլանային ցուցանիշների հետ, տնտեսավարական սկզբունքի թափանցումը անտեսական բոլոր բնագա-վառները, անմիջական վերահսկողության ուժեղացու-մը Փինանսական ներգործության միջոցներով, դրա-մական միջոցների և անդրամ հաշվարկումների կենտ-րոնացումը մի միասնական առարկանի մեջ, —այս բոլո-րը այն առաջնակարգ և անհատաձգելի պրոբլեմների կարգին են պատկանում, վորոնք կապված են մեր տրն-տեսության զարգացման ներկա ետապի հետ և վորոնց անշեղ կենսագործումը վարկային ուժքորմի միջոցավ առաջարկում և մեր Փինանսական և տնտեսական որ-դանեներին։

Վարկային ուժքորմը խորհրդային տնտեսական սիստեմի ծնունդն է։ Նա աներևակայելի յե կապիտա-լիստական տնտեսության համար, վորտեղ առեւտրա-կան վարկի վերացումը և պլանային սկզբունքների մուտքը համարոր և կապիտալիզմի հիմունքների ժըմու-ման, վորտեղ «պլանային մեթոդները» կիրառվում են շահագործման և անհատական ողուտի նոր միջոցներ վորոնելու համար։ Կապիտալիստական տարերային տնտեսության կարգերում, մրցակցության և շահա-գործման պայմաններում վարկային ուժքորմը մի կա-ռարբյալ հեղափոխություն կլիներ, մինչդեռ մեզ մոտ

նա տնտեսական քաղաքականության դենքերից մեկը պիտի ծառայի՝ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքականուցումը հաջողությամբ ավարտվելու, ժողովրդական տնտեսության հարածյուն վերելքն ազահովելու համար։

3. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԻ ԽԵՂԱՓՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԲԱՐԵՖՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վարկային ռեֆորմը հետապնդելով առաջնակարգ ժողովրդատնտեսական նպատակներ և հիմնված լինելով բացառապես տնտեսավարական սկզբունքի վրա՝ մի ուժեղ լծակ պիտի լիներ դրամական միջոցների մոքելիպացիայի և վերաբաշխման համար, անմիջական ներդորդությամբ պիտի ապահովեր ընդհանուր ժողովրդատնտեսական սպանի իրացումը և ուորլու միջոցով կոնտրոլի յենթարկեր՝ տնտեսական որդանների գործունեյությունը։ Սա յեր վարկային ռեֆորմի հիմնական իմաստը, զորք ստեղայն Պետական Բանկի առարտական թերությունների և տնտեսավարների կողմից պատշաճ վերաբերմունքի բացակայության հետևանքով յենթարկից վորու խեղաթյուրումների։

Այդ խեղաթյուրումները ծագում են մի շարք սկզբունքային և զործնական շարժառիթեներից։ Նախ և առաջ, Պետրանկը, զորը կոչված եր իրականացնելու վարկային ռեֆորմը, փոխանակ արագորեն վերակաղմելու իր ապարատը իրեն հաշվարկի և հաշվառման մի կենտրոն, փոխանակ հակելու համայնացած սեկտորի կուտակումների և Փինալլանների անթերի կատարման մրա, փոխանակ ուժեղացնելու վարկավորվող հիմ-

նարկների պատասխանավությունը և տնտեսավարական հիմունքները, — նա ձգտում էր ստանձնել այնպիսի զժվարին և իր ուժերից վեր մի Փունկցիա, ինչպիսին եւ բովանդակ համայնացած սեկտորի պլանավորումը և տնտեսական բոլոր պրոցեսների կարգավորումը։

Այս և նման հանգամանքները կասեցնելով Պետրանկի ուշադրությունն իր անմիջական պարտականություններից և վարկային ռեֆորմի գործնական ինդիվիւդությունը, ընականաբար խոչընդուն ովիտի հանդիսանալին՝ ձեռն և ըստ ամենայնի պատրաստված ապարատ ստեղծելուն, բանկային տեխնիկան և հաշվարկման ձեռնը ըստ կարելույն պարզեցնելու և բարելավելու գործին, մի յերեսույթ, վորն անկատկած բացասարար պիտի անդրադառնար վարկային ռեֆորմի բարեհաջող ընթացքի վրա և նորաստավոր մթնոլորտ ստեղծեր վնասարարության և զանազան խեղաթյուրումների համար։

Պետրանկը ըստ իր հայեցողության վորոշ վարկությունների յենթարկելով հիմնարկների ներկայացրած վարկային պլանները, վարկավորումը կատարում եր այդ պլանների ընդհանուր գործարների սահմաններում, առանց ի նկատի առնելու հիմնարկների իրական աշխատանքի ընթացքը, պայմանագրերից բղխող փաստական գործարքների արդյունքները և առանց ստուգելու, թե արդյո՞ք համապատասխանում և նրա բաց թողած վարկը հիմնարկի պլանի կատարմանը։ Վարկավորման այս յեղանակը հանգում էր մի լիակատար ավտոմատիզմի, վորն ի գերի եր հանում պլանների իրագործման վերահսկողությունը, առիթներ ընձե-

սում Փինանսական գլուխալինայի խախոսումների համար և չեր ապահովում փոխառու միջոցների դործադրումը նախառեսաված նորանակների համար, ինչուս և արդ միջոցների անարդել վերաբարձր գեղի իր սկզբունական յելակեալ:

Այս պայմաններում մեր տնօսեսավարներից շատերը հաճախ իրենց շահագրգումած չպալով սեփական Փինանսական վիճակով, թերազնահատում ելին դրամի նշանակությունն ու արժեքը, քանի վոր նրանք հնարավորություն ունելին գումարներն ստանալ Պետրանկից ավտոմատիկ ձեռվ՝ լոկ պլանի գիմաց և վոչ թե փառարեն տեղի ունեցող գործարքների և իրավես կատարված աշխատանքի հիման վրա: Այս հանգամանքներում մերթ մերթ ստաջացող մտախությունները դրամի մոտալուստ փախանի և տնօսեսավարական սկզբունքի վերացման մասին, կամ թե պետական և կոոպերատիվ առևտուրն անմիջական մթերաբաշխման սիստեմով փոխարինելու մասին, մտայնություններ, վորոնք չեն բղխում ՆԵՊ-ի վերջին ետապի պահանջներից և ներկայումս ավելի շուրջ վնասակար ցնդարանությունների կարգին են պատկանում, —սեղծում ելին անպատասխանատու և անտարբեր վերաբերմունքի մի մթնոլորտ տնօսեսական կարես ինպիրների չուրջը: Ինչո՞ւ մտածել ինքնարժեքի իջեցման, ներքին ուսուրաների ողտագործման, ոգուտների և կուտակումների մասին, քանի վոր առանց այդ ել բանկը լրացնում է հիմնարկի դրամարկի բացերը:

Ավտոմատիզի թերություններից մեկը պլանի համարել նաև այն հանգամանքը, զոր Պետրանկը մատակարարուների հաշիվ-Փակտուրաների համաձայն մե-

խանիկ հաշվարկներ կատարելով ի հաշիվ դնորդների, առանց վերջիններիս գիտության ու համաձայնության, միանդամայն նսեմացնում եր մատակարարողների և դնորդների միջև կնքված պարմանադրերի նշանակությունը, զորի հաեւանքով մատակարարողները կարիք չգլանով սերտ կապակցության մեջ մտնել գնորդների հետ և հնարավորություն ունենալով ճանապարհած ապրանքների փոխարժեքն ստանալ Պետրանկից անմիջականորեն, առանց գնորդների նախական համաձայնության, —հաճախ սնուարելուսության ելին մատնում սպառողների շահերը և խախտում պայմանագրերով նախառեսաված ապրանքների վորակը, ասորտմենաը, և զոնային մատակարարման ժամկետները և այլն: Մյուս կողմից, մեխանիկ հաշվարկումների պատճառով վարկավորվող որդաններն ի վիճակի չելին սլանաչափ ձեռվ ողտագործել իրենց տրամադրված վարկերը և կատարել Փինանսներով նախառեսաված ծախքերը ըստ կարիքի և հերթականության, քանի վոր ավտոմատիկ վարկավորման և մեխանիկ հաշվարկումների հետեւանքով վարկային լիմիտները հաճախ վաղաժամ սպառում և նույնիսկ հիմնովին խախտվում ելին:

Այդ խեղաթյուրումներին ավելանալով պլանների բյուրոկրատացման տենգենցները և կենտրոնացած ապրանքամատակարարման բոնագրոսիկ ձեռվը, անխուսափելիորեն թուլանում եր տնօսեսավարական սկզբունքը, վերանում պայմանագրերի նյութական ուժը և հիմնարկները կորցնելով իրենց ինքնուրույն անտեսավարական գերը՝ դառնում ելին միանգամայն գիմազուրկ, յենթարկվում ինքնահոսի, զրկվում առողջ նախաձեռնությունից:

Միութենական ժողկոմիսորչը 1931 թվի հունվարի 14-ին քննարկելով վարկային ռեֆորմի կերպուման ընթացքում հայտնաբերված շեղումներն ու թերությունները, իր՝ «Վարկային ռեֆորմի պրակտիկան բարելավելու միջոցների մասին» վորոշմամբ նշեց այդ պրակտիկայի մեջ մուծելիք անհրաժեշտ բարեփոխությունների ուրվագիծը: Այսուհետեւ այս հարցը լայն հասարական քննության դնելով, սույն տարրվա մարտի 20-ին միութենական ժողկոմիսորչը իր յերկորբությունում՝ գործմամբ, գորը կրում ե՝ «Վարկավորման սիստեմը փոփոխելու, վարկային դորձն ամրապնդելու և տնտեսավարական սկզբունքը բոլոր տնտեսական որդաններում տպահովելու մասին» վերառությունը, —ընդուեց այն սույները, վարոնցով պիտի վերանան նկատված թերություններն ու խեղաթյուրումները և մուծվեն վորոշիություններ վարկավորման դորձի մեջ:

Այդ յերկու վորոշումներով միութենական ժողկոմիսորչը պարագանեցնում է Պետքանիկին և տնտեսական որդաններին՝ ընթացիկ տարրվա հայիսի 1-ից վերակառություն իրենց դորձնական աշխատանքներն այնպես, զոր մի կողմից տնտեսական որդաններն իրենց փոխհարաբերությունները կարգավորեն համապատասխան պայմանագրերով, առաջնորդվելով բացառապես տնտեսավարական սկզբունքներով և կրելով խստագույն պատասխանատվություն այդ պայմանագրերից ծագող պարագաներությունների համար, և մյուս կողմանը պարագաների Պետքանիկի Փինանսական վերահսկողությունը՝ հմանարկների պլանային ցուցանիշները ճշությամբ կատարելու և համայնքած սեկտորի կուսակումները լիսին ապահովելու համար:

Այս նպատակով վարկերի պլանավորման մեջ մինչ այժմ տիրող կարգը յենթարկվում է եյական փոփոխության, այսուհետեւ տարեկան և կվարտալային վարկային պլանները ներկայացվում են միութենական ժողկոմիսորչի հավանությանը համապատասխան գերատեսչությունների (միութենական ժողկոմիսորչ, Մատողկոմատ, Հողգողկոմատ և այլն) կողմից, ընդ վորում այդ պլանների առթիվ Պետքանիկը տալիս է ժողկոմիսորչին և պլանային մարմիններին իր հմտավորված յեղակացությունը: Ժողկոմիսորչի կողմից համարություն ստացած վարկերը գերատեսչություններն առողարածանությունները են իրենց յենթակա տնտեսական միավորությունների միջև և այս ստորագրածանումը վերաբերի ներկայացնում միութենական ժողկոմիսորչի վերջնական հաստատությանը: Այսուհետեւ տնտեսավար միավորությունների իրենց հերթին բաշխում են համատաված վարկերն իրենց ստորագրած ձևոնարկությունների միջև, այսպիսով սահմանվում է առանձին տնտեսական ձևոնարկության վարկը, զորը կազմում ե այն սակելաղույն սահմանը—լիմիտը, զորից այն կողմը չի կարող անցնել ավալ որդանի պարուքը:

Պլանների կենապորձման պրոցեսի ընթացքում գերատեսչությունները կարող են վերաբաշխել վարկերն իրենց յենթակա միավորությունների միջև, բայց ինումութիւնի մթերման համար նախատեսված վարկերից, զորոնց վերաբաշխումը կարող է տեղի ունենալ միմիայն Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշմամբ: Յեթե գերատեսչությունների կատարած վերաբաշխումը զգալի փոփոխություններ և մայնում առանձին միավորությունների արտադրական ծրագ-

ւերի մէջ, Պետրանկը իրավասու յե դադարեցնել վարկերի վերաբաշխումը և այդ հարցը շտապ կերպով զնել աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի քննությանը:

Իր վարկային ծրագրի մէջ Պետրանկի վարչությունը պիտի նախատեսի գործառնական սեղերի վորոշումար, վորն լսու կարիքի նու կարող եւ գործադրել ստանալով վերատեսչությունների համաձայնությունը. իրենց հերթին գերատեսչություններն ու տնտեսական միավորություններն իրենց հատկացրած վարկերի սահմաններում կարող են կաղմել մանյեվրային ուղերձներ: Այսպիսով վարկերի պլանավորման, նրանց հաստատման և բաշխման կարգը յենթարկվում է արտադրական փոփոխության, ընդ վորում վարկերի վերաբաշխման և տեղաշարժումների պրակտիկան, ինչպես և գործառնական ու մանյեվրային սեղերների սիստեմը վարկավորման գործին տարով ամելի գյուրաշարժ և երաստիկ բնույթ: Հնարավորությունն է ընձեռում արտադրական ծրագրներն ընդլայնելու և վարկավորման նոր որդիկաններ հանդես դադու դեպքերում ապահովել զանազան տնտեսական ճյուղերի վարկային պահանջները:

Առանձին տնտեսական որգանի համար հաստատված լիմիտը նրան իրավունք չե տալիս, ոգտագործել իր վարկը այդ լիմիտի սահմաններում անարդել և առանց իրական կոնտրոլի, ինչպես այդ տեղի ուներմինչե այժմ: Այդ լիմիտը ավալ ձեռնարկության պարուքի առավելագույն սահմանն է կաղմում, իսկ Պետրանկը այսուհետեւ ֆինանսավորումը ի կատար պի-

տի ածի ձեռնարկությունների միջև կնքված պայմանագրերից բղխող կոնկրետ գործարքների հիման վրա, վաստարեն կատարած աշխատանքի չափի և հատկության համաձայն. այլ խոսքով՝ վարկավորումը պիտի չաղկապի արդինալանների կենսագործման հետ, նըսնդ քանակական և վորակական ցուցանիշների հետ:

Միաժամանակ փոփոխության են յենթարկվում նաև հաշվարկումների ձևերը: Մատակարարագինների ներկայացրած հաշիվ-Փակուրանները Պետրանկը վճարում եւ ի հաշիվ պատվիրատունների միմիայն այն զեղքում, յերբ ավալ պատվիրատուի (գնորդի) լիմիտը դեռ ևս չի սպառվել կամ լիմիտը խախտման վտանգի չի յենթարկվում: Վճարումները ի հաշիվ զնորդների կարող են կատարվել միայն վերջններիս համաձայնությամբ, վորպիսի համաձայնությունը կարող է արտահայտվել հաշիվների նախական վավերացումով՝ ակցեպտով, կամ առանձին հանձնարարությամբ՝ ակերեղիտիվով և կամ թե հատուկ հաշիվների ձևով, ընդ վորում ներկա պայմաններում նախապատվությունը արգում և ակցեպտին, վորպիս համաձայնության ավելի վորոշակի և անխոտելի մի ձևի: Սա մի կարևոր հանգամանք է, վորը հիմնովին փոխաւմ է մատակարարող և զնորդ հիմնարկների փոխհարաբերությունները: Այսուհետեւ առանց կողմերի նախական համաձայնության չի կարող տեղի ունենալ ապրանքարժամական վորեն գործարք. ապրանքների մատակարարումը պիտի կատարվի զնորդների պատվերներով՝ նախորդքինքած պայմանագրերի համաձայն. ապրանքների քանակը, ասորտիմենտը, վորակը, առաքման ժամկետները և հաշվարկի յեղանակը անպայման նախատեսված

պիտի լինեն այդ պայմանագրերով, վորոնց ճշգրիտ կատարումը պարտադիր է պայմանավորվող կողմերի նյութական պատասխանառության տակ մատակարարող հիմնարկը փոխառուցում չի կարող ստանալ իր ապրանքների գիմաց, յեթե նրանք չեն համապատասխանում պայմանագրի կետերին, մյուս կողմից՝ ապրանքը չի հանձնվի գնորդին, յեթե նա զլանա վորոշված ժամանակին հաշվարկը կատարել: Այսպիսով, ֆինանսական միջոցների անորինման ասպարիզում տընտեսական որդաններն ստանում են վորոշ ճկնություն և ինքնուրաւինություն:

Իր հերթին Պետրանկը վարկավորելով բացառապես լիմիտի սահմաններում և յելակետ ունենալով տնտեսական որդանների միջև կնքված պայմանագրերը, այսուհետեւ նա չի կարող դրամական փոխանցումներ կատարել առանց շահագրգոված կողմի նախնական համաձայնության, նա այլ ես չի կարող ավտոմատիկ հաշվարկումներ անել, առանց ի նկատի առնելու փասուրների ունեցած զործարքները: Բայց Պետրանկը իրավասու յե ընդհատել վարկավորումը, յեթե տվյալ հիմնարկը թերանում է իր սպառավորությունների մեջ կամ խախտում կնքված պայմանագրերը: Ֆինանսական դիսցիլինայի խախտման գեղքերում Պետրանկը իրավասու յե կրծատել կամ դադարեցնել վճարումները անպարտաձնաչ հիմնարկների հաշիվներից և մինչև իսկ պարտադիր կարող վաճառել նման հիմնարկներին պատկանող ապրանքներն ու այլ նյութական արժեքները: Զնայած այն հանդամանքին, վոր տնտեսական որդանները պետական և կոռուպտատիվ կազմակերպություններ են, նրանք չեն կարող իրենց վիճաները ծած-

կել ի հաշվիվ Պետրանկի և այդպիսի ծանր կացության գեղքերում իրենց աչքերը հառել պետության զրամարկուն, այլ նրանք պիտի կրեն իրենց հանցագարութարքների բալոր հետեանքները: Վորպեսզի Պետրանկը իրազեկ լինի վարկավորվող հիմնարկների գործունելությանը, հիմնարկների զեկավարները և հաշվային աշխատակիցները դիսցիլինայի պատասխանառության սպառնալիքի տակ սպառավորելու նն կանոնավորել հաշվետվությունը և ժամանակին հրապարակել հիմնարկի բարձրանաները:

Այս բոլորից հետեւում և, վոր վարկային ուժորմի բարեկիսության մասին միութինական ժողկոմների կայսրած գորոշումը ամրողութին հիմնված ե տնտեսավարական սկզբունքի խորացման վրա, վորը ինավ չպիտի նույնացնել տնտեսական հարաբերություններին բացարձակ աղասություն տալու հետ, այլ ընդհակառակը՝ այլ սկզբունքը պիտի կապել նեղ-ի նոր քննանում առաջացող մի շարք պահային և ողերատիվ ինդիքների հետ: Սերորեն չաղկապվելով ժողովրդատնտեսական պլանի կենսագործման հետ, տնտեսական ակրուենքը այժմ կոչված է իրականացնելու այդ ընդհանուր պլանի որպահական հատվածները՝ տնտեսական միավորների շրջանակներում: Փինալլանների անշեղ կատարումը, խնայողության և կուտակման համար աշխատավաճառը ամենախոշոր խթաններից մեկը պիտի ծառայի: Կատար ածելու ժողովրդատնտեսական պլանով նաև խառնված մաքտական խնդիրները:

Մինչդեռ նեղ-ի սկզբանական շրջանում արդյունաբերական միավորների կազմը գնորդների հետ կրում եր

